

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ*
(1920—1967 ԹԹ.)

Տ. Խորեն Ա. կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը

Տ. Խորեն Ա. կաթողիկոսը ծնվել է 1873 թվականին Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունը հաջողությամբ ստանալուց հետո Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, մի քանի տարի որպես ազատ ունկնդիր հետևել է Ծվեցարիայի համալսարանական դասընթացներին:

Որոշ ժամանակ զբաղվել է ուսուցչությամբ Թիֆլիսի շրջանի հայկական գյուղերում:

1901 թվականին վարդապետ է ձեռնադրվել Սևանի վանահայր Սարգիս եպս. Փիլոյանից և դարձել նույն վանքի միաբան:

Պաշտոնավարել է Նոր Բալազեղում՝ որպես առաջնորդական փոխանորդ: 1903 թվականի եկեղեցական կալվածքների գրավման ժամանակ, որպես չհամակերպվող ցարական կարգադրությանց, աքսորվում է Ռուսաստանի Օրլո քաղաքը: Ապա ազատվելով աքսորից, վերադարձել է իր պաշտոնատեղին:

1910 թվականին, ժողովրդային ընտրության վրա, Երևանի հայրապետական թեմի

փոխ-թեմակալ կամ փոխանորդ է նշանակվել և նույն տարվա Վարազա խաչի Բարեկենդանի կիրակին՝ 19-ին սեպտեմբերի, հոգելույս տ. Մատթեոս Իգմիրլյան կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրվել՝ օծակից ունենալով տ. Բաբգեն եպս. Կյուլեսերյանին (Անկյուրիայի առաջնորդ և ապա աթոռակից կաթողիկոս Անթիլիասի 1930 թ.), տ. Թորգոմ եպս. Գուշակյանին (Սեբաստիայի առաջնորդ և ապա Երուսաղեմի հայոց պատրիարք 1932 թ.), տ. Զավեն եպս. Եղիաշանին (Առաջնորդ Տիգրանակերտի և ապա պատրիարք Կ. Պոլսի հայոց 1913 թ.) և վեց այլ եպիսկոպոսների հետ:

Գևորգ Ե-ի օրով, 1920 թվականին, նշանակվել է հայրապետական պատվիրակ Հյուսիսային Ամերիկայի հայոց, ուր կազմակերպել է թեմը և նախագահել երեսփոխանական-պատգամավորական այն ժողովին, որ Ամերիկայի հայոց առաջնորդ է ընտրել Մար Աթոռի միաբան տ. Տիրայր արքեպիսկոպոսին:

1920—1930 թվականներին աչքազուկն է հանդիսացել Գևորգ Ե կաթողիկոսի:

1923 թվականին կաթողիկոսական կոնդակով նշանակվել է Ամենայն Հայոց Հայ-

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1967 թվականի ԺԲ և 1968 թվականի Ա—Բ համարներից:

րապետի տեղակալ և նախագահող անդամ Գերագույն հոգևոր խորհրդի՝ պահելով հանդերձ Երևանի հայրապետական թեմի փոխանորդության պաշտոնը մինչև 1923 թվականը:

Նույն թվականից հաստատվել և պաշտոնավարել է Մայր Աթոռում՝ որպես տեղակալ և լուսարարապետ:

Գևորգ Ե-ի մահից հետո, 1930—1932 թվականներին, իբրև տեղակալ ձեռնհաստրեն վարել է Մայր Աթոռի գործերը:

1932 թվականի նոյեմբերի 12-ին՝ շաբաթ օրը, Մայր տաճարում գումարված ազգային-եկեղեցական ժողովում ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Օժուրը կատարվել է նոյեմբերի 13-ին Մայր տաճարում՝ մասնակցությամբ 12 եպիսկոպոսների, ի ներկայության պատգամավորների և խոտմեքամ հավատացյալների:

Անցան 1932 թվականի նոյեմբերի 10—13-ի ազգային-եկեղեցական ժողովի գումարման, կաթողիկոսական ընտրության, օժման ու զանապալության օրերը. և նորընտիր կաթողիկոսը անմիջապես և հետևողականորեն ձեռնամուխ եղավ իր ծանր և պատասխանատու պաշտոնի խղճամիտ կատարմանը:

Գաճակալության հանդիսությունից մի շաբաթ հետո, 1932 թվականի նոյեմբերի 18-ին, **Տ. Խորեն Ա կաթողիկոսի** նախագահությամբ գումարվում է նորընտիր Գերագույն հոգևոր խորհուրդը:

Նորընտիր կաթողիկոսի կամքն էր՝ նախքան հարապետական անդրանիկ կոնդակի գրվելը, տեղի ունենան Գերագույն հոգևոր խորհրդի նիստերը և ընթացք տրվեն գործերին:

Ժողովի գումարումից առաջ Գերագույն հոգևոր խորհրդի անդամները Վեհաժողովում ներկայացնում են **Տ. Խորեն կաթողիկոսին**՝ նրա օրհնությունից ստանալու:

Անուհետև **Տ. Խորեն** կաթողիկոսը կատարում է Գերագույն հոգևոր խորհրդի առաջին նիստի պաշտոնական բաժումը և պաշտոնը և օրհնությանը: Կաթողիկոսը, ողջունի իր խոսքից հետո հաջողություն և արդյունավորություն մաղթելով ժողովի աշխատանքներին, ասարգում է ներևա նստաշրջանի ղեկավար, թվելով այն խնդիրները. որոնք քննության առարկա պետք է դառնան:

Գեոառույն հոգևոր խորհրդի առաջին նիստին ներևա են լինում **տ. Գաբրեել, տ. Գևորգ, արքեպիսկոպոսները, տ. Արտակ, տ. Առսեն եպիսկոպոսները:**

Գեոառույն հոգևոր խորհրդի սույն նիստին հրամիռնում են նաև աղ. օրերին Մայր Աթոռում գտնվող թեմակալ առաջնորդներ՝ **տ. Վրթանես եպիսկոպոսը** (առաջնորդ

Ղարաբաղի թեմի) և **տ. Սարգիս եպիսկոպոսը** (առաջնորդ Գանձակի թեմի):

Գերագույն հոգևոր խորհրդի առաջին գործն է լինում՝ հաստատել և արձանագրել ազգային-եկեղեցական ժողովի գումարման, կաթողիկոսական ընտրության և զանապալության առթիվ նվիրապետական Աթոռներին, թեմերին ուղարկված ծանուցագիր-հեռագրերը, ուր հրահանգվում էր նաև նորընտիր հայրապետի անվան հիշատակությունը մեր եկեղեցիներում՝ ըստ հնավանդ ավանդության:

Գերագույն հոգևոր խորհուրդը ապա զբաղվում է հայրապետական անդրանիկ կոնդակի պատրաստության հարցով: Կոնդակի գեղարվեստական ձևավորումը հանձնարարվում է **տ. Գաբրեելին** արքեպիսկոպոսին, որպես հալ մանրանկարչական արվեստի հմուտ մասնագետի:

Գերագույն հոգևոր խորհուրդը զբաղվում է նաև իր նիստերին աշխարհական երկու պատգամավորների մասնակցության հարցով և որոշում՝ առաջին հերթին հրավիրել ազգային-եկեղեցական ժողովի ատենապետության երկու հայտնի մտավորական անդամներին, Երևանի թեմից՝ **Երվանդ Ծաֆազիզին**, Թիֆլիսի թեմից՝ **Ստեփան Մայիսյանցին** «գործնականապես դժվար համարելով մշտական աշխարհական անդամների առկայությունն ս. Էջմիածնում» (ժողովի արձանագրություն): Նույն սկզբունքով Գերագույն հոգևոր խորհրդի նիստերին մասնակցում է հետագայում Կոնստանտին Գյուլնագարյանը՝ Երևանի թեմից:

Ժողովում որոշվում է նաև Գերագույն հոգևոր խորհրդի արձանագրական որոշումների գործադրությունը արագացնելու և որոշումների կատարման վրա հսկելու համար ստեղծել շաբաթական հերթափոխություն Գերագույն հոգևոր խորհրդի անդամների միջև:

Կաթողիկոսի հանությամբ և առաջանկով Գերագույն հոգևոր խորհրդի անդամների միջև որոշվում է աշխատանքի բաժանում և ղեկավարության շրջաններ: Առաջին, Գերագույն հոգևոր խորհրդի նիստերի նախագահող անդամ է նշանակվում **տ. Գաբրեել արքեպիսկոպոս Հովսեփյանը**, որի վրա պարտականություն է դրվում ժողովի նիստերից հետո ներկայացնել կաթողիկոսին և հանուն ժողովի զեկուցել նիստերի ընթացքի և որոշումների մասին և ցուցմունքներ ստանալ քննված կամ քննվելիք հարցերի առթիվ:

Նույն նիստում **տ. Գևորգ արքեպ.** Ձեռքբեքյանը նշանակվում է հարապետական ներկայացուցիչ և բանակցող՝ պետական, կառավարական շրջանակների մոտ: **Տ. Ար-**

տակ եպիսկոպոսը՝ Մայր Աթոռի գանձապան և Երևանի թեմի հայրապետական փոխանորդ, իսկ տ. Արսեն եպիսկոպոսը՝ Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Մայր Աթոռում:

1932 թվականի նոյեմբերի 29-ին գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի երկրորդ նիստը, որ որոշվում է ազգային-եկեղեցական ժողովի գումարման, կաթողիկոսական ընտրության, օծման և գահակալության մասին պատրաստել պաշտոնական հաղորդագրություն, առանձին տեղաբնակի հրատարակության համար, և ուղարկել նվիրապետական Աթոռներին, թեմերին, ազգային-եկեղեցական հաստատությանը որպես պատմական փաստաթուղթ: Այս աշխատանքը Գերագույն հոգևոր խորհրդի անունից հանձնարարվում է տ. Գևորգ արքեպիսկոպոսին:

Հաջորդ նիստերից մեկում Գերագույն հոգևոր խորհուրդը, կաթողիկոսի հանձնարարությամբ, զբաղվում է «Մայր Աթոռի հաստատությանը պաշտոնական կազմի և նոցա ելևտից հաշվատարության մասին» հարցով:

Գերագույն հոգևոր խորհուրդը, կաթողիկոսի ցանկությամբ, «կամենալով Մայր Աթոռի բոլոր հաստատությանց գործառնությունը ճշտել և նոցա հաշվատարությունը կանոնավորել», ուշադիր խորհրդակցության և քննության նյութ է դարձնում այդ հարցը:

Մայր Աթոռի բոլոր վանական, վարչական, տնտեսական հաստատությունները ունենում են իրենց ելևտուքի մատյանները:

Նորընտիր հարապետի կարևոր գործերից մեկն է լինում նաև դիվանատան կազմակերպումը: Նրա ցանկությունն ու հրահանգն է եղել՝ ոչ մի թուղթ չթողնել առանց պատասխանի, որպես միջոց՝ կենդանի կապ պահելու նվիրապետական Աթոռների, թեմերի, եկեղեցական համայնքների, հայ և օտար շրջանակների հետ:

Տ. Խորեն կաթողիկոսի գործունեության առաջին մտահոգություններից մեկն էր Մայր Աթոռի տնտեսական ապահովության հարցը:

Ազգային-եկեղեցական ժողովը մասնավոր ուշադրությամբ քննության էր առել Մայր Աթոռի «միանգամառ անապահով նյութական վիճակը, նրա եկամուտների պակասության և պատահական բնույթի պատճառով» և պարտք էր դրել մանավանդ սփյուռքի թեմերի վրա՝ «հոգալ պարբերաբար նպաստներով Մայր Աթոռի բազմատե-

սակ կարիքները, նրան արժանավազ դիրք տալու նպատակով» (Արձանագրություն):

Երուսաղեմի պատրիարք տ. Թորգոմ արքեպիսկոպոսը 1933 թվականի սեպտեմբերի 24-ին «Լուսավորչի լուման» արտառուշ շրջաբերականով դիմում էր Երուսաղեմի պատրիարքության սահմանների բովանդակ հայության՝ օգնելու Մայր Աթոռին, շեշտելով, որ Վեհապատ Հայրապետը, Գերագույն հոգևոր խորհուրդը և միաբանությունը «ի վիճակի չեն այսօր հոգևորականաց կրթության, պաշտոնաթերթի հրատարակության և հարապետական իշխանության վերաբերյալ նման կարիքներու գոհացում տալու», և կոչ էր անում «փութալ որդիաբար օգնության ձեռք կարկառել ամենու պատվական և մեծարելի Մորը, կանգուն պահելու համար մեր հավատքին դարավոր Տունը, մեր եկեղեցվո կեդրոնական Սյունը՝ Էջմիածինը»:

Տ. Թորգոմ պատրիարքը Մայր Աթոռի օգնության մնայուն և լավագույն ձևն էր համարում բոլոր թեմերում «Լուսավորչի լումա» անունով տարեկան մի տորքի հաստատումը, «գոր կամավորապես վճարե Հայաստանյայց եկեղեցվո ամեն չափահաս զավակ, այդ թե կին» («Սիոն», 1933, էջ 320):

Թորգոմ պատրիարքի կոչը ջերմորեն ընդունվում էր սփյուռքի բոլոր թեմերում:

Գերագույն հոգևոր խորհուրդը զբաղվել է նաև մասնավոր կարևորությամբ այն հարցերով, որոնք ազգային-եկեղեցական ժողովի կողմից հանձնարարվել էին նորընտիր Գերագույն հոգևոր խորհրդին:

Այդ հարցերն էին՝

1. Եկեղեցական նոր սահմանադրության մշակման հարց,
2. Հայ եկեղեցու բարեկարգության հարց,
3. Հարաբերություններ նվիրապետական Աթոռների հետ,
4. Հոգևոր ճեմարան բացելու և ամսաթերթ հրատարակելու հարց,
5. Մայր տաճարի վերանորոգության հարց,
6. Սփյուռքի թեմական կազմակերպության հարց:

Կաթողիկոսի նախագահությամբ Գերագույն հոգևոր խորհուրդը քննության է առնում այս հարցերը և ընդունում համապատասխան որոշումներ, որոնց մասին կխոսվի ստորև:

Հայրապետական անդրանիկ կոնգրակը

S. Խորեն Ա. կաթողիկոսը, իր գահակալությունից շուրջ ութ ամիսներ հետո, իր հիվանդության պատճառով, 1933 թվականի հունիսի 1-ին, միայն գրում էր. հայրապետական իր անդրանիկ կոնգրակը:

Հայրապետական անդրանիկ կոնգրակը հասցեագրված է S. Սահակ Բ. և աթոռակից S. Բաբգեն Ա. կաթողիկոսների Տանն Կիլիկիո, Երուսաղեմի տ. Թորգոմ և Կ. Պոլսի տ. Մեսրոպ պատրիարքներին, թեմերի առաջնորդներին, հոգևորականության, բարեգործական, ազգային «աստուածահանոյ հաստատությանը», «համօրեն հաւատացեալ հօտին... որ ի Հաւաստան աշխարհի, ի հանրապետութիւնս Խորհրդային Միութեան և յամենայն պետութիւնս ի սփիւռս աշխարհի»:

Միաժամեջ Մայր տաճարից օրհնություն և իր հայրապետական ողջույնը հաղորդելով բովանդակ հայության, S. Խորեն կաթողիկոսը նոյեմբերի 10—13-ին Մայր Աթոռում գումարված եկեղեցական ժողովը և իր անձի վրա կատարված ընտրությունը և հաջորդ օրը նոյեմբերի 13-ին հայրապետական օծումը համարում է նշանակալից իրադարձություն, «կոչեմք զսա եզակեան՝ ոչ միայն ազատ գործառնութեամբ իրով, առանց արտաքին ներգործութեանց և թելադրութեանց ի վնիւս, այլ և նորոգութեամբ հնաւանդ սովորութեանն՝ ըստ ոգւոյ Մերս եկեղեցւոյ, որ հայի յընտրութիւն միոյ և եթ թեկնածուի կաթողիկոսի և յօծումն նորա անմիջական, առանց միջամտութեան կամ հաստատութեան մարմնական իշխանութեանն»:

Հառոց Հայրապետը ակնուհասեւ իր անդրանիկ կոնգրակում հանգամանորեն խոսում էր իր առաջ կանգնած քաղաքական դժվարությունների վրա, որոնցից առաջինը համարվում էր հայ ժողովրդի աշխարհով մեկ գրգռված ու գաղթական լինելը, «գրկեալ ի հաշրենի տանէ և յընչից, թափառական յոյրոսս օտար և հեռաւոր աշխարհաց... ենթակալ աշխարհման, տատանեալ ի հաւատս և բեկեալ ի յոյսոյ»:

Սրտառույ է արձանագրել, որ Հայոց նորընտիր Հայրապետը հավատքով և լավատեսությամբ լցված, լծվում է իր ծանր, պատասխանատու հայրենասիրական պարտականությունների կատարմանը, «կանգնել զօյրեալս և հաստատել ի հաւատ և ի յոյս, ժողովել իմի զգրուեալսն ի հոգևոր հայրենիս, ի փարախ Լուսաւոտիւն մերոյ Հայաստանեայց»:

Անդրանիկ կոնգրակում Հայրապետը խոսում էր ազգային-եկեղեցական ժողովի ո-

րոշումների կատարման մասին, Հայաստանյայց եկեղեցու բարեկարգության և եկեղեցական սահմանադրության վերաբերյալ, «ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի», բայց «իմաստուն խոհականութեամբ և զգուշութեամբ», այն է՝ «կազմել նոր սահմանադրութիւն, բոլեալ ի նուիրական և ի պատմական աւանդութեանց եկեղեցւոյ մերոյ, ի նկատ առեալ և զբազմաւտեսակ իրաւակարգ ժողովրդոց, որոց միջի բնակեալ կան հատուածք հաւատացելոց մերոց, բարեկարգել և նորոգել զհնացեալ սովորութիւնս և կարգս, որք կարօտին սրբազորութեան, ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի, ի սահմանս իմաստուն խոհականութեան և զգուշաորութեան»:

Հայրապետական կոնգրակում S. Խորեն կաթողիկոսը խոսում էր նաև Մայր Աթոռի տնտեսական ապահովության մասին մանավանդ, «ի յարատևութիւն միաբանական ոխտիս և դաստիարակել զմանկունս եկեղեցւոյ ի սպասաւորութիւն և ի կենդանի քարոզութիւն Բանին կենաց»:

Այս դժվարությունների առաջ կաթողիկոսը չէր կորցնում իր հավատքն ու լավատեսությունը հայ եկեղեցու և Մայր Աթոռի ապագայի նկատմամբ, «ի կրել զծանր լուծ պարտաւորութեան ի կառավարութեան սրբոյ եկեղեցւոյ», հույսը դրած միայն «Յողորմութիւն և յօգնականութիւն Աստուծոյ» և ապա համագործակցության վրա մեր նվիրապետական Աթոռների, թեմերի ու հավատացյալ ժողովրդի, «որք միացեալ ի սիրտ և ի հոգի սիրովմ Բրիտոսի և եկեղեցւոյ մերոյ, օգնական լիցին ի կատարման պարտեացս ի պահպանութիւն և ի պաշտառութիւն Մօրս Ընդհանրականի և Հոգևորի»:

Այնուհետև S. Խորեն կաթողիկոսը «ընդ հայրական ողջունիս» խոսքն ուղղում է թեմական առաջնորդներին, հայ եկեղեցու հոգեւորականությանը, «որք ի Հաւաստան աշխարհի, ի Խորհրդային Միութեան և յարտասահմանի», որ նրանք լինեն «զգաստ և աշակուրջ ի պաշտամանդ, ժիր ի քարոզութեան Բանին կենաց, օղակ կենդանի ընդ մէջ հաւատացեալ ժողովրդոց և հայրապետական Աթոռոյ, զի ամենեքեան դուք հոգեւոր որդիք էք Մեծի Տանն և անդամք միաբանական ոխտիս, որ ի ս. Էջմիածին»:

Իր անդրանիկ կոնգրակում S. Խորեն Ա. կաթողիկոսը խստիվ հորդորում է հոգևորականության, որպէսզի նրանք լինեն օրինակ հավատացյալների, «ջան հաւատոյ և բարեպաշտութեան ի հոգիս հաւատացելոց», չքաղվեն քաղաքականությամբ, չխտնվեն

քաղաքական գործերի և որ ամենից կարելի է, կուսակցականներ չլինեն և իրենց հովվության և առաջնորդության հանձնված ժողովրդին հեռու պահեն «ի կուսակցական պաշարաց և յանխորհրդեանց, հայելով միայն ի բարոյական և ի կրօնական շինութիւն հօտիդ»:

Սրտառույշ ու թելադրական է Հայոց Հայրապետի հայրենասիրական կոչը այն իմաստով, որ մեր եկեղեցին, մեր հայրենիքը, մեր ժողովուրդը խաղաղության են կարոտ, խաղաղությունը աշխատանք է, կատուցում է, հարստություն է և բարիք, հոգևոր, եկեղեցական, մշակութային և հայրենասիրական տեսակետից. «Հայրենի երկիրս մեր և համայն ազգի սիրիս կրօնսին խաղաղութեան առ ի բուծել գրնկալեալ վերս իրեանց, ուստի և պարտիք գուն գործել վտարել ի միջոյ հաւատացելոց զամենայն ինչ, որ հակառակ կալ խաղաղութեան և մի՛ թողոյ զթշնամական արարս րնդդէմ Մայր Հայրենեաց մերոյ՝ Խորհրդային Հայաստանի և կառավարութեան նորին»:

Կաթողիկոսը գոհունակությամբ նշում է, որ մեր ժողովրդի գոյության, կենդանության և հոգևոր ժառանգության խարիսխը, վերը հալ եկեղեցին է և մայր հայրենիքը. «Արդ, — հորդորում է Հայոց Հայրապետը. — սիրեցէք զմարն Ձեր հաւատոյ, գտորք եկեղեցի և եղերոք հաւատարիմ որդիք նորա՝ ո՛ր և գտանցի՞ր...»

Մի անջատեցեն զՁեզ տարածութիւնք հեռաւորք, ծովք և օվկիանոսք ի սիրոյ բնիկ ժողովրդեան, բնակելոյ ի պատմական հայրենիս և ի Մայր Աթոռոյ, որ սիրտ կենդանութեան եղեալ է հոգևոր կենաց համայն ազգի, վկայ և կորոշ յախտեանական պատմական անցից, ուրախութեան և վշտի, յաջողութեան և տառապանաց ժողովրդեան մերոյ դարոց ի դարս»:

Հայ ժողովրդի վերածննդյան անսուտ պատգամը տալով բովանդակ հաւորեան, Հայոց հայրենասեր Հայրապետը վկայում է.

«Հստ բերման դժբախտ հանգամանաց աւերեցաւ երկիր մեր և տարագրեցաւ կենդանի մնացեալ ժողովուրդն ի սիրիս աշխարհի, որոց մասն են և բազումք ի Ձէնց, սակաւ ողորմութեամբն Աստուծոյ շնորհեցաւ մեզ Արարատեան աշխարհն սահմանակից օաւառաւքն, որ օր ըստ օրէ ծաղկեալ բարաւաճի ի շինութեան և ի քաղաքակրթութեան. օհտան և ի տնտեսական ամենատեսան Ժողովուրդինս ի ձեռն բարեջան և առավարութեան Խորհրդային Հայաստանի»:

Հայրապետական անդրանիկ կոնդակը ավարտվում է հայրենասիրական, սրտառույշ կոչով և հորդորելով. «զայս յայտ առնէք

Ձեզ, որդեակք մեր սիրելիք, յուրախութիւն և ի մխիթարութիւն, յորդորելով զՁեզ սատարել բարոյապէս և նիւթապէս վերաշինութեան երկրիս... զի դուք ուստ էք միոյ ծառոյն, արմատք և բուն կենդանութեան որոյ հաստատեալ կան ի պատմական հայրենիս մեր՝ ի Խորհրդային Հայաստանի»:

Հայրապետական կոնդակը ոչ միայն գեղեցիկ էր, իմաստալից իր բովանդակությամբ, այլ նաև գեղարվեստականորեն հոյակապ մի հրատարակություն: Ամբողջ կոնդակը եզերված էր կապուտակ զարդերով և ոսկեծիր էր, անկտին՝ ա. Էջմիածնի Մայր տաճարի նկարը, նրանից ներքև քառակուսի ծիրանափայլ կնիք հայրապետական, Գառն Աստուծոյ պատկերով, կոնդակի ստացին երեք տողերը, ինչպէս նաև յուրաքանչյուր հատվածի առաջին տողը վարդագույն կարմիր: Կոնդակը ստորագրված է կապուտ թանաքով՝ Խորեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց:

Հայրապետական անդրանիկ կոնդակը հաւ մանրանկարչության գեղեցիկ մի նմուշ է, տպագրված Երևանում, Պետհրատում, 200 տպաքանակով և ուղարկված արտասահման, նվիրապետական Աթոռներին, թեմերին:

Հայրապետական անդրանիկ կոնդակի հրատարակության առիթով. Երո՛ւսաղեմի տ. Թորգոմ պատրիարք Գուշակյանը արտահայտելով սիրտը հայության սրտագին ուրախությունը, խոհերն ու զգացմունքները, «Անդրանիկ կոնդակը» խմբագրականի մեջ, «Սիոն» ամսագրի էջերում, գրում էր.

«Երջանիկ է «Սիոն», կարենալով ասա անգամ զարդարել իր ճակատը պատճենովը ամենայն հարց Հայրապետի առաջին արքայապետ կոնդակին, որ Արարատեան աշխարհի հայրենական քաղաքություններն և Էջմիածնի նվիրապետական սրբություններն տաւն ամիսներէ ի վեր սպասված և կարողացված ձայնի մը գեղեցիկ ավաշը կրէրն մեզի»:

Ծածարիտ Հորը և Բանի Բարի Հովվին ձաւն է ան. ուսկից ամենքս սրբագործած լուս մուտոնին բուրումը կելլէ, և որուն մեջ՝ Լուսամորջի և իր արծանավոր հաջորդներուն, Ներսէսներու և Սահակներու, մինչև Խրիմյան, Իզմիրյան և Գևորգ Վոշալի իրարու հաջորդած հայրապետներու սրտին տրոփումն է, որ կլմի կարծես, մեղմ՝ բաց անաղտոր կրօնութիւն մը, խոգ՝ բայց արի հոգիի մը կենդանւան մեջեն:

Ամենու, աւին ու պարտքն է մեզ առնել կոնդակի բառ. ան ամեն մեկին առջև հաղաւթով և երկուտ թաւաք, իբրև անաղտոր իմաստութեան հար խրատներու առջև, լռել՝ լսելու հաւորք որը ձայն

նը, որ անկորնչական իրավունքներու հուշքը կարթնցնէ մեր մէջ, նոյն ատեն նորոգելով մեր սրտերուն խորը՝ անհրաժարելի պարտականությանը զգացումը» («Սիոն», 1933, էջ 302):

Տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսը «Հասկ»-ում խորհրդածելով Ամենայն Հայոց Հարապետի կոնդակի առթիվ արտահայտված մտքերին և հարցերի վրա, գրում էր «Էջմիածին և Անթիլիաս» խմբագրականի մէջ.

«Այնու գատ-գատ Աթոռներ չկան Հայաստանայց եկեղեցւոյ մէջ: Մի է Հայաստանայց եկեղեցին, մի է հայոց կաթողիկոսությունը, և կաթողիկոսները գործակիցներ են իրարու և ո՛չ թե տարբեր իրավասություններու և տարբեր իշխանություններու ներկայացուցիչներ իրարու հանդէպ:

Ինչպէս որ Մի է քահանայությունը, թեև բազմաթիվ են քահանաներ, ինչպէս որ Մի է եպիսկոպոսությունը, և բազում եպիսկոպոսներ կան, նոյնպէս ալ Մի է Հայաստանայց եկեղեցւոյ կաթողիկոսությունը, թեև կաթողիկոսական երկու Աթոռներ կան այսօր:

Ասոնք գործակիցներ են իրարու և ո՛չ թե հակառակորդներ... Էջմիածին և Անթիլիաս կուծավորվին գործակցության ոգով» («Հասկ», 1933, էջ 58):

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով հարգալիի հարաբերությունները շարունակվեցին Մայր Աթոռի և հայրենի կառավարության միջև գործնական և օրինական սահմանների մէջ:

Տ. Խորեն կաթողիկոսը իր անդրաճիկ կոնդակում գրում էր, որ 1932 թվականի ս. Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի

գումարման, կաթողիկոսական ընտրության ու գահակալության հաջողությունները, «պարտիմք բարեհաճութեան Խորհրդային կառավարութեան Հայաստանի»:

Տ. Խորեն Ա կաթողիկոս, 1933 թվականի հունիսի 20-ին, իր առաջին պաշտոնական այցելությունն էր տալիս Հայաստանի կառավարության, ընկերակցությանը Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ տ. Գաբեգին և տ. Գևորգ արքեպիսկոպոսների, ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ կառավարության ընձեռած դուրքությունների և իր կաթողիկոսական ընտրության առթիվ կառավարական շնորհակտությանը համար, իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնելու:

Մայր Աթոռը հայրենասիրական իր պարտքը պատվով և արթությամբ է կատարել դեպի իր վերածնած ժողովուրդը և նրա նորաստեղծ պետականությունը. նաև Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով:

«Էջմիածին» ամսագրի 1967 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր համարում հարապետական կոնդակների, ճառերի և արխիվային նյութերի հիման վրա ներկայացրել ենք 1920—1967 թվականներին Մայր Աթոռ ս. Էջմիածնի վերջին չորս գահակալների, այդ թվում՝ Տ. Գևորգ Ե, Տ. Խորեն Ա, Տ. Գևորգ Զ և Տ. Վազգեն Ա կաթողիկոսների հայրենասիրական գործունեությունը:

Այստեղ չենք ուզում կրկնել, ինչ ասել ենք այդ էջերում Տ. Խորեն Ա կաթողիկոսի հայրենասիրական գործունեության մասին (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1967, № 10—11, էջ 11—12:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության հազարհինգհարյուրամյակը

Տ. Խորեն Ա կաթողիկոսի գահակալության հիշատակության արժանի գործերից մեկը հանդիսացավ Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի տոնակատարության նշումը համազգային հանդիսության մեջ և շքով, որպես հայ մշակույթի իրավ տոն:

Ամենայն Հայոց Հայրապետի նախագահության ներքո Գերագույն հոգևոր խորհուրդը քննության առնելով Աստվածաշնչի թարգմանության և հայ գրականության սկզբնավորության 1500-ամյակի մերձեցումը, 1934 թվականի ամռան Մայր Աթոռում մասնավոր խորհրդակցություն է հրավիրվում՝ մի խումբ ծանոթ մտավորականների մասնակցությամբ, և նկատի առնելով Աստվածաշնչի թարգմանության բարեխալ և վճռական նշանակությունը հայ ժողովրդի մշակույթի և պատմության համար, որոշում

է տոնել ս. Գրքի թարգմանության և հայ գրականության սկզբնավորության 1500-ամյա հոբելյանը կամ 15-րդ դարադարձը, որպես հայ մշակույթի մեծ ու համազգային տոն:

1934 թվականի հոկտեմբերի 1-ին Տ. Խորեն Ա կաթողիկոսը համար 1076 սրբատառ կոնդակով 1934 թվականի հոկտեմբերից «Ա. Թարգմանչաց վարդապետաց մերոց» տոնից մինչև 1935 թվականի հոկտեմբերի նույն տոնը հայտարարում է հոբելյանական տարի:

Տ. Խորեն կաթողիկոս Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը հալ ժողովրդի պատմության կարևոր և սքանչելի գործերից մեկը համարելով որպես «փառաւոր յիշատակարան դպրութեան և շտեմարան նոխութեան դասական լեզուիս հայոց, որպէս պա՛յծաւ փարոս, լուսաւորելով զճանա-

պարհս յառաջդիմության և հոգևոր ստեղծագործության դարուց ի դարս հայկազեանս ազգի» հրահանգում է այս հոբելյանի առթիվ «սրել զգիտակցութիւն ժողովրդեան և Ազգիս յիշատակաւ մեծի գործոյն և տալ առիթ վերագնահատութեան սրբազան և մեծի պարգևին Աստուծոյ, ի թանկագին ժառանգութեանս նախնեաց, արծարծելով զերախտագիտական զգացմունս և զսէր առ մեծ երախտաւորս Ազգիս, առ երանի դասս աւետ արքոյ Թարգմանչաց, զխառնութեամբ արքոյն Սահակայ Պարթևի և Մեսրոպայ Մաշտոցի»:

Հայրապետական կոնգակը Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյա հոբելյանի կազմակերպման պարտականությունը պիտոքում դնում էր Երուսաղեմի տ. Թորգոմ պատրիարքի վրա, «որպէս զներկայացուցիչ Մեր և զղեկավար կազմակերպութեան գործու, հաստատելով զառանձինն կեդրոնական Յանձնաժողով»՝ նրա նախագահության ներքո և մասնակցութեամբ Տանն Կիլիկիայի և Կ. Պոլսի պատրիարքական Աթոռների մեկական ներկայացուցիչներին:

1934 թվականի հոկտեմբերի 1-ին և համար 1077 մասնավոր կոնգակով Տ. Խորեն Ա կաթողիկոսը տ. Թորգոմ պատրիարքին նշանակում էր իր ներկայացուցիչը և հանձնարարում հոբելյանի առթիվ «կազմակերպել զսոցալստառութիւն նոցա ի համայն ափիոս գաղութահայութեան, քնդ նշանակաւ միութեան համայն Աստուծոյ, ինչուի, մատենադարան, և քաղաքակրթութեան ամենամեծ հոգևոր ստեղծագործութեան»:

Հատապետական կոնգակը հրահանգում էր նաև մանրամասն ծրագիր կազմել տոնակատարության, կատարել եկեղեցական, դարձական. մշակութային հանդեսներ, դասխոսութիւններ կազմակերպել. Աստվածաշնչի մասին ուսումնասիրություններ հրատարակել, ինչպէս նաև հայագիտական ժողովածուներ:

Հատապետական կոնգակը տ. Թորգոմ պատրիարքին իրաւումք էր տալիս «ձեռնադրելու հանձնարարութեան ի հրատարակութիւն աշխատութեան»:

Տ. Թորգոմ պատրիարք ստոյլ հանձն էր առնում իր ուսերի մոտ դրված հատապետական աստախաճատու օրոքի դեկաւորութիւն և հատապետական կոնգակների հրահանգի համաձայն մի բովանդակաւ «Շոգաբեռնական»-ով դիմում էր սփորութի «մեծ ուրող սինեի ազատութեան», շնչելով, որ Ամենայն Հայոց Հատապետի սրբատառ կոնգակով «հրաւիրւածութեամբ Է. որ ընդ 1934 տարւա հոկտեմբեր 27-ի Սրբոց Թարգմանչաց տոնին սկսելով միջև հաղա-

ջիկա 1935 տարւոյն նոյն ամսական նոյն տոնը նկատվի հոբելյանական տարի ի հիշատակ հազարհինգհարյուրամյակի կամ ԺԵ-րդ դարադարձի Աստվածաշնչի հայերեն թարգմանության»:

Հայրապետական հրահանգի համաձայն, Երուսաղեմում, տ. Թորգոմ պատրիարքի նախագահութեամբ կազմվում էր «Կեդրոնական հանձնաժողով Տաննհինգերորդ դարադարձ Յոբելիի Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան», Ս. Հակոբսեանց վանքի Տնօրեն ժողովի և Ուսումնական խորհրդի զուգ մարմիններից և Կիլիկիո կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքական ներկայացուցիչների մասնակցութեամբ:

1912—1913 թվականներին Գևորգ Ե կաթողիկոսի հրահանգով բովանդակ հայությունը խանդավառ մթնոլորտում և ազգային հպարտության քաղցր զգացումներով տոնում էր հայ գրերի գլուխ 1500-ամյակը (412—1912) և հաւ տպագրության 400-ամյակը (1512—1912):

Այս անգամ ևս մեր ժողովուրդը ամենուրեք տոնում էր «մեր պատմության ամենեւն լուսավոր աշդ թվականը Աստվածաշնչի գաղափարին և գործին տոնախմբութեանց» («Սիոն», 1934, 369) Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը, թարգմանություն, որ Աստվածաշնչի հնագույն այլ թարգմանութեանց հետ քաղտատմամբ, «իր լեզվի կենդանութեան, ոճի վսեմութեան, դարձվածքներուն նախարակաւ վաւելյութեան, քառագանձի ճոխութեան և, վերջապէս, նյութին աստվածաւորութեան անքան նշտիլ զուգնաց բոլոր շնորհներուն մեջ» («Սիոն», 1934, էջ 370) հանդիսաւալ յավաւուն թարգմանություններու մեկը: Իսկ թարգմանիչները «աստվածաւոր գործակցութեան մը մասին իրենց համատքին և իրենց հույսին մեջ» հաւորտ էին և ուրախ, որ «աւղ գործով ամենամեծ բարիքը պիտի մատուցած լինէին իրենց ժողովրդին» (370):

Թորգոմ պատրիարք պատմով կատարեց իր մոտ դրված աստախաճատությունը:

«Սիոն» ամսաւոր. ոտի ճաւատտ մի ամբողջ տարի զառնարմած էր հոռիւանո հոռոտ հատապետութեամբ, «434—Յոբելյանական տարի—1935, ԺԵ-րդ դարադարձի Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան» իր Էօեռո յաւոռոն բազաւ ուսումնասիրութիւններ, հոռիւանների «Յոբելյանի էջ» մասնավոր բաժնում:

Տ. Թորգոմ պատրիարք «Հոբելյանին քառական» հոռիւաւ հո յամբաւորաւանում («Սիոն», 1935, ռեկտեմբեր, էջ 365) մի ոնդհանոր աննարսի մեջ ամփոփում էր հոբելյանի խորհրդին ու «հանրային խղճմտանքին

առջև ունեցած անոր բարությանն նշանակությունը, որ ոգևորեց սփյուռքի հայկական կյանքն ամբողջ, համախմբվելով ազգովին, զիրար հասկնալու և անցյալի հուշով կազդուրելու համար, ներկային զգացումը և ապագային հույսը», «ամենալուսավոր հայրապետության հանդեպ բնդհանուր սփյուռքի կողմն ցուցված համատարած հնազանդության և համակերպության», «սիրալիր համերաշխության այն ոգին և երեվույթին մեջ», որ արտահայտվեց հայ մշակույթի մեծ տոնի առիթով բովանդակ հայության մեջ, առանց դավանական և կուսակցական տարբերության:

Հայ ժողովրդի մշակույթի մեծ տոնին իրենց սրտի, գնահատանքի և ողջույնի խոսքն ասացին նաև օտարները, այնքան սիրալիր և ուշադիր ձևով:

Տ. Թորգոմ պատրիարք Մայր Աթոռին և Տ. Խորեն Ա կաթողիկոսին տեղյակ էր պահում կանոնավոր մամուլագրությամբ և թղթակցություններով, Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի առթիվ սփյուռքում կատարված հոբելյանական հանդիսությանը մասին, արժանանալով հայրապետական օրհնության կոնդակի և շնորհակալության:

Տ. Թորգոմ պատրիարք գեղեցիկ գաղափարն ունեցավ նաև այս առթիվ հրատարակելու հոբելյանի հանդիսությանը նվիրված մի ժողովածու՝ «Յուշարձան Աստուածաշունչի հայերեն թարգմանության հազարհինգերորդամեակի», որը լույս տեսավ Երուսաղեմի հալոց վանքի տպարանից, 1938 թվականի հուլիս ամսվա մեջ, էջ ԺԶ+560: (Ծարունակելի)